

Կ Ի Տ Ա Լ Ի Բ Ի Ա Ն Կ Ի



Կ Ո Ր Տ Ե Ղ

Խ Ե Ց Գ Ե Տ Ի Ն Ն Ե Ր Ն Ե Ն Զ Մ Ե Ռ Ո Ւ Մ

ՎԻՏԱԼԻ ԲԻԱՆԿԻ

ՎՈՐՏԵՂ
ԽԵՑԳԵՏԻՆՆԵՐՆ ԵՆ ՋՄԵՌՈՒՄ



Թարգմ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Նկարները յեզվ ռապիկը Վ. ԿՈՒԿՐՈՎԻ



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 3 5

ՆԱԽՄԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՏՈՐԻՆ ՀԱՍԱԿԻ ՅԵՐԵՎԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատ. խմբագիր՝ Սիրա ս
Տեխ. խմբագիր՝ Ա. Գառնաբեկյան
Մրբագրիչ՝ Հ. Մանուկյան



11-28401gr

Գլխավոր տ. 329 Պատվեր 1187, Հրատ. 3479. Տրբած 5000.

Հանձնված է արտադրութան 14 հոկտեմբերի 1935 թ.
Ստորագրված է տպագրելու 27 նոյեմբերի 1935 թ.

Խոհանոցում խաթուրիկի վրա դրված էր մի տափակ կողով, ոչա-
դասալի վրա — կաթսա, սեղանի վրա — մի մեծ սկուտեղ: Կողովում
խեցգետիններ կային, կաթսայում կար լեռացրած ջուր, միջին աղ
ու սամիթ, իսկ սկուտեղում վոշինչ չկար:

Ներս մտավ տանտիկինը և սկսեց.

Մեկ — ձեռքը տարավ կողովը և բռնեց խեցգետնի մեջքից,

Յերկու — խեցգետինը գցեց կաթսայի մեջ, սպասեց, մինչև
լեփի և

Յերեք — խեցգետինը գդալով կաթսայից վերցրեց ու գրեց
սկուտեղի մեջ: Յեվ այդպես շարունակ:

Մեկ — մեջքից բռնված սև խեցգետինը բարկացած շարժում
էր բեղերը, բաց անում չանչերը, չըթացնում պոչը,

Յերկու — խեցգետինն ընկնում էր լեռացրած ջրի մեջ, դադա-
րում էր շարժվելուց և կարմրում, յերեք — կարմիր խեցգետինը պառ-
կում էր սկուտեղում, պառկում էր անշարժ և նրանից գոլորշի լեռ
բարձրանում:

Մեկ — յերկու — յերեք, մեկ — յերկու — յերեք — կողովի խեց-
գետինները քշանում էին, կաթսայի ջուրը լեռում էր ու խլթխլթ-
թու՛մ, իսկ սպիտակ սկուտեղում աճում էր կարմիր խեցգետիննե-
րից կազմված սարը:

Ահա կողովի մեջ մնաց վերջին խեցգետինը:

Մեկ — տանտիկինը մատներով մեջքից բռնեց:

Այդ ժամանակ սեղանատնից նրան կանչեցին:

— Բերում եմ, բերում եմ, — վերջինն է, — պատա սխանեց տան-
տիկինը և շփոթվեց,

Յերկու — սև խեցգետինը դրեց սկուտեղի մեջ, մի քիչ սպասեց, գդալով սկուտեղից վերցրեց մի կարմիր խեցգետին և

Յերեք — գցեց լեռացող ջրի մեջ:

Կարմիր խեցգետնի համար միևնույն էր թե վորտեղ կլինի ինքը — տաք կաթսայում թե գոլ սկուտեղում: Սև խեցգետինը բուրրովին չէր ուզում կաթսայի մեջ լինել, չէր ել ուզում սկուտեղում լինել: Ամենից շատ նա ուզում էր այնտեղ լինել, վորտեղ խեցգետիններն են ձմեռում:

Յեվ լերկար չմտածելով, նա սկսեց իր ճանապարհորդութունը — դեպի լեռ, դեպի լեռ, նահանջել դեպի բակը:

Նա հանդիպեց կարմիր խեցգետինների անշարժ սարին և մտավ նրանց տակ:

Տանտիկինը սկուտեղը զարդարեց սամիթով և տարավ դրեց սեղանի վրա:

Սպիտակ սկուտեղը կարմիր խեցգետիններով և կանաչ սամիթով շատ գեղեցիկ էր: Խեցգետինները համով ելին: Հյուրերը սոված ելին: Տանտիկինն զբաղված էր: Յեվ վոչ վոք չնկատեց, թե ինչպես սև խեցգետինն սկուտեղից ընկավ սեղանի վրա և լեռ-լեռ գնալով մտավ ափսեյի տակ, լեռ-լեռ գնալով հասավ սեղանի ծայրին:

Իսկ սեղանի տակ նստած էր փիսիկը և սպասում էր. մի բան չէր ընկնի արդյոք տիրոջ սեղանից, վոր ուտի:


Հանկարծ — թրակ, նրա առաջը մի սև, բեղավոր բան ընկավ:

Փիսիկը չգիտեր, վոր դա խեցգետին է, կարծեց, թե մեծ, սև ուտիճ է և քթով հրեց:

Խեցգետինը լեռ-լեռ գնաց:

Փիսիկը թաթով խփեց նրան: Խեցգետինը շանչերը բարձրացրեց: Փիսիկը վորոշեց, վոր նրա հետ գործ ունենալ չարժե, լեռ դարձավ և պոչը քսեց նրան:

Իսկ խեցգետինը — հափ, շանչերով հուպ տվավ նրա պոչի ծայրը: Թե իմանաք ինչ արավ կատուն: Միտո՛ւ — թռավ աթոռի վրա:



Միանու — աթուռից սեղանի վրա: Միանու — սեղանից պատուհանը:
Միանու — բակը թռավ:

— Բռնեցեք, բռնեցեք, կատաղել ե, — բացականչեցին հյուրերը:

Բայց փխտիկը քամու պես սրացավ բակով, թռավ ցանկապատի վրա և վազեց այգու միջով: Այգում մի լճակ կար և փխտիկը, լերևի, ջրի մեջ կրնկներ, լեթե խեցգետինը շանչերը չթուլացներ և նրա պոչը բաց չթողներ:

Փխտիկը լետ դարձավ ու փախավ տուն:

Լճակը փոքրիկ էր, սողմոտ և մեջը խոտ էր աճել: Նրա մեջ ապրում էին լերկարապոչ, ծուլլ արխտոններ, ծածաններ և խխունջներ: Նրանց կյանքը սաղտկալի լեր — միշտ միևնույն բանը: Տրիտոնները լողում էին դեպի ներքև ու դեպի վերև, ծածանները լողում էին առաջ ու լետ, խխունջները սողում էին խոտի վրայով, մի որ դեպի վեր, մյուս որը՝ դեպի վար:

Հանկարծ շուրը ճողփաց և մի սև մարմին, պղպղակներ բաց թողնելով, հատակն ընկավ:


Իսկույն բոլորը հավաքվեցին նրան տեսնելու — մոտ լեկան տրիտոնները, ծածանները, խոտերից ցած իջան խխունջները:

Ճիշտ վոր նայելու բան էր. ամբողջովին սև էր, բեղերի ծայրից մինչև պոչի ծայրը զրահապատ:

Ամուր զրահի տակից դուրս էին լեկել լերկու բարակ ցողուններ, վորոնց վրայից դուրս էին ցցվել լերկու անշարժ աչքեր: Յերկար, ուղիղ բեղերը նիզակների պես դեպի առաջ էին ցցվել: Չորս գույգ բարակ վոտները լեղանների նման էին, լերկու շանչերը, վորպես գույգ մեծատամ լերախներ:

Լճակի բնակիչներից վնչ մեկը լերբեք խեցգետին չեր տեսել և բոլորը հետաքրքրութունից մոտենում էին նրան: Խեցգետինը շարժվեց — բոլորը վախեցան և հեռու քաշվեցին: Խեցգետինը բարձրացրեց առջևի վոտը, լեղանով բռնեց իր աչքը, ցողունը լերկարացրեց և սկսեց մաքրել:

Սա մի այնպիսի զարմանալի բան էր, վոր բոլորը կրկին մո-



տեցան խեցգետնին, իսկ մի ծածան մինչև անգամ դիպավ նրա բեղերին:

Մեկ, խեցգետինը չանչերով բռնեց նրան և հիմար ծածանը կես լեղավ:

Չկնիկները և ծածաններն իրար անցան և այս ու այն կողմը փախան, իսկ սոված խեցգետինն սկսեց ուտել:

Կուշտ եր ապրում խեցգետինը լճակում: Ամբողջ որերով նա հանգստանում էր տղմի մեջ: Գիշերները թափառում էր, բեղերով շոշափում հատակը, խոտը, չանչերով բռնում դանդաղաշարժ խխունջներին:

Տրիտոններն ու ծածաններն այժմ վախենում էին նրանից և հեռանում: Նրա համար խխունջներն էլ բավական էին. նա խխունջներին ուտում էր իրենց տնակների հետ միասին և գրանից էր, վոր նրա գրահն ամուր էր:

Բայց լճակի շուրը հոտած էր, նեխած: Յեվ նա առաջվա պես ձգտում էր աչնակդ, ուր խեցգետիններն են ձմեռում:

Մի լեռեկո սկսեց անձրև գալ: Ամբողջ գիշերը թափվում էր ու թափվում, իսկ առավոտյան լճակի շուրը բարձրացավ, ափերից դուրս լեկավ: Հոսանքը խեցգետնին լճակից դուրս հանեց, տարավ խփեց մի կոճղի, հետո տարավ զցեց առուն:

Խեցգետինն ուրախացավ, լայն պոչն ուղղեց, խփեց ջրին և լետ ու լետ լողաց:

Բայց անձրևը կտրվեց, առվի շուրը պակսեց—լողալն անհարմար դարձավ: Խեցգետինը սողաց:

Սողում էր լեռկար ժամանակ: Յերեկը հանգստանում էր, գիշերը կրկին ճամպա ընկնում: Առաջին առվից հետո կար լեռկորդը, լեռրորդը, չորրորդը և նա շարունակ լետ-լետ էր գնում, սողում ու սողում և չէր կարողանում դուրս գալ հարյուրավոր առուններից:

Ճանապարհորդության տասերորդ օրը նա սոված մտավ մի ինչ վոր ծուռտիկ կոճղի տակ և սկսեց սպասել. նրա մոտից չի՞ անցնի արդյոք մի խխունջ, ձուկ, կամ գորտ:



Ահա նստած ե նա ծուռտիկ կոճղի տակ և լսում ե. չըմփ...
մի ծանր բան ափից ընկավ առվի մեջ:

Խեցգետինը տեսավ, վոր դեպի իրան ե լողում մի մեծա-
գլուխ գազան, բեղավոր, կարճ թաթերով, հասակը կատվի չափ:

Ուրիշ ժամանակ խեցգետինը կվախենար, կփախչեր այդպիսի
գազանից: Բայց քաղցին դիմանալ չի լինի: Մի կերպ պետք ե փորը
լցնել:

Յերբ գազանը նրա մոտից անցնում եր, մին ել հնփ... Չան-
չերով բռնեց նրա հաստիկ, մազոտ պոչը: Կարծում եր, թե մկրա-
տի նման կկտրի: Բայց այդպես չեղավ: Գազանն ել գազան չեր,
ջրային առնետ եր, վոր քաշեց — թռչնից թեթև դուրս լեկավ խեց-
գետինը ծուռտիկ կոճղի տակից: Առնետը պոչը մի կողմ նետեց և
չըրթ — խեցգետնի շանչը կես լեղավ:

Խեցգետինն ընկավ առվի հատակը: Իսկ մուկը խեցգետնի
շանչը պոչին, հեռու լողաց: Դեռ շնորհակալ պետք ե լիներ, վոր
իր սարսափելի ատամներով չբռնեց նրան, թե չե ամուր զրահն ել
չեր ոգնի:

Խեցգետինը մի շանչով շարունակեց սողալ:

Ծովային խոտ գտավ, կերավ: Հետո ընկավ սղմի մեջ: Նա
զցեց սղմի մեջ իր թաթ — լեղանները և սկսեց շուռ ու մուռ տալ:
Յետեվի ձախ վոտով սղմից մի ճիճու հանեց: Մի թաթից մյուսը
տալով, մի թաթից մյուսը տալով, նա ճիճվին իր փորն ուղարկեց:

Կշտացավ և նորից սկսեց սողալ:

Մի ամբողջ ամիս տեվեց խեցգետնի ճանապարհորդութունն
առվից — առու:

Արդեն սեպտեմբեր ամիսն եր, չերբ խեցգետինն իրեն վատ
զգաց, այնպես վատ, վոր ել առաջ սողալ չկարողացավ: Յեվ սկսեց,
պոչով առվի ափի ավազը խառնել, փորել: Հենց վոր իր համար վորջ
փորեց սկսեց կուչ ու մուչ գալ:

Խեցգետինը կաշին փոխում եր: Նա պառկեց մեջքի վրա: Նրա
պոչը լերբեմն ձգվում եր, լերբեմն կուչ գալիս, բեղերը կուչ ու ճիգ



եյին լինում: Հետո նա միանգամից ձգվեց, զրահը փորի կողմից պատռվեց և նրա միջից դուրս սողաց վարդա — դարչնագույն մի մարմին: Այս ժամանակ խեցգետինը պոչն ուժով քաշեց և ինքն իրենից դուրս լեկավ: Մեռած բեղավոր զրահը այրից ընկավ: Ջրահը դատարկ էր, թեթև: Ուժեղ հոսանքը նրան քշեց հատակը, բարձրացրեց, տարավ: Իսկ կավե այրում պառկած մնաց կենդանի խեցգետինը — այժմ այնքան փափուկ և անոգնական, վոր խխուռնջն իր քնքուշ լեղջյուրիկներով կարող էր նրան ծակել:

Որ որի լետեվից անց էր կենում, բայց նա ընկած էր անշարժ:

Կամաց — կամաց նրա մարմինն սկսեց ամրանալ, նորից կոշտ զրահով ծածկվել: Միայն այժմ զրահը վոչ թե սև էր, այլ կարմրա — դարչնագույն:

Յեվ այ հրաշք. առնետի պոկած շանչը նորից սկսեց արագ կերպով աճել:

Խեցգետինը վորջից դուրս լեկավ և նոր ուժով ճանապարհ ընկավ դեպի այնտեղ, վորտեղ խեցգետիններն են ձմեռում:

Առվակից առվակ, առվից առու սողաց համբերատար խեցգետիններ: Նրա զրահը սեփանում էր:

Որերը կարճանում էյին, անձրև էր գալիս, ջրի վրա լողում էյին թեթև, վոսկեգույն նավակներ — ծառերից պոկված տերեւներ:


Առուն խառնվում էր մի ուրիշ առվի, առուն վազում էր դեպի գետը:



Լողաց, լողաց առվից առու համբերատար խեցգետինը և վերջապես ընկավ տղմոտ ափեր ունեցող մի լաջն գետի մեջ:

Ջրի տակ կային մի քանի հարկանի այրեր, այրեր, այրեր — ինչպես ծիծեռնակի բներ: Յեվ յուրաքանչյուր այրից նայում էր մի խեցգետին, ուսերը շարժում, շանչերով սպառնում:

Խեցգետինների մի ամբողջ քաղաք:

Ուրախացավ ճանապարհորդ խեցգետինը: Ափին ազատ տեղ






գտավ և իր համար մի հարմար — հարմար այլ փորեց: Կուշտ կե-
րավ և պակեց ձմեռելու, ինչպես արջն իր վորջում:

Արդեն ժամանակն էր, ձյուն էր գալիս, ջուրն էլ սառչում էր:

Այրի անցքն էլ փակեց իր մեծ — մեծ չանչերով, — արի ու
ներս մտիք, տեսնեմ վճնց ես ներս մտնում:

Յեվ քնեց:

Այսպես էլ բոլոր խեցգետիններն են ձմեռում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0937812

13 ФЕВ 1930

11

28401

354



ВИТАЛИЙ БИАНКИ
ГДЕ РАКИ ЗИМУЮТ

АРМЕНИЗ - 1935